

Հարց Ովքե՞ր են ապրանքային շուկայի սուբյեկտները:

Պատասխան Ապրանքային շուկայի սուբյեկտներն ապրանքի վաճառողն ու գնորդն են, որոնք ապրանքի սեփականության (տիրապետման, օգտագործման և տնօրինման) իրավունքը փոխանցող գործարքի կողմեր են:

1) Ապրանքի վաճառողներն են՝

- սեփական արտադրանքն իրացնող տնտեսավարող սուբյեկտները,
- առևտրային և միջնորդ կազմակերպությունները, որոնք ապահովում են ապրանքների շարժն արտադրողից դեպի վերջնական սպառող:

2) Ապրանքի գնորդներն են՝

- արտադրանքի վերջնական սպառողները,
- առևտրային միջնորդները,
- ապրանքներն արտադրական սպառման նպատակով ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտները: